

ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յէջ 182)

Աթլ կարծեացս հաստատութիւն է խաղտի կամ Հալտիս աստուածուհւոյն 'ի մեզ և 'ի Քաղզէացիս գտած պաշտաման հաւասարութիւնն, Քաղդի անուան (Քաղզէացի) և 'ի Հայս խաղտիք գաւառի նոյնութիւնն և նմանութիւն, զոր Հայախաղտիք անուանեն ոմանք: Դարձեալ Սոփուս Բուզգէի և այլ եւրոպեան հնախօսից ոմանց այժմեան վարդապետութիւնք և հաստատութիւնք: Եւ դարձեալ մասնաւորապէս Աքատեան և Հայ լեզուի մերձաւորութիւնքն: Դարձեալ խորենացւոյն հետեւեալ խօսքն՝ առաջին գրոց մէջ. — « Բազում ազգաց լեալ մա. » տենադիքք, մանաւանդ Պարսից (իւրանեան) և ՔԱՂԴԵԱՑԻՈՅ, » յորս առաւել ազգիս մերոյ գտանիւն քաղտն ինչ իրաց յի. » շատակք », մեծագոյն և անհերքելի ցուցմունք են և վկայութիւնք մեր առաջադրեալ խնդրոյն:

Ի խաղտեաց աշխարհէ դէպ 'ի Միջագետ գաղթող Քաղդիք կամ խաղտիք արիական սերունդ են. որք ապա 'ի Միջագետս իրենց գաւառական և շեռնակաւ անունն պահելով և այլոց ալ տալով՝ խառնուեցան սեմական ցեղին հետ: M. Fontane կ'ըսէ. (Les Asiatiques p. 22). « Il est difficile de distinguer en » Assyrie... les types des quatre grandes races principales, » qui ne s'y rencontrèrent que pour s'y quereller la race » touranienne, ou ouralo-finnoise, la race asiatique (de Sem), » la race africaine (de Cham), la race aryenne, ou européenne » (de Japhet), —

Որչափ պատշաճապէս ըստ այսմ կրնամք մեկնաբանել խորենացւոյ մեր Նախահօր 'ի Սենաարայ դարձին նկատմամբ ըրած պատմութիւնն. պահ մի ենթադրելով իսկ՝ թէ այդ ամենն առասպելականք ըլլան, սակայն ստոյգ է այսչափն՝ զի Բնիկ-Հայ-Արիաստանի զանազան գաղութք գիւմած են 'ի Միջագետս, և յառաջելով դէպ 'ի Պարսկական ծոցն. և անտի դեռ ևս յառաջացած և ետ դարձած են: Մեր Նախահօր՝ պատմութեան աւանդած՝ դարձն 'ի Հայս, գուցէ զկնի ժամանակաց կրկին դի.

մեկն է Հայ-Արեւաց արեւելեան շաւղով. և կամ Հայահնդիկ-Արեւաց խորասանի ճանապարհաւ, — Սենաարայ վրայէն անցնելով՝ Հայոց բնավայրն մտնելն է. և այս ըստ Ս. Գրոց, զի « ժոռ » զովուրդք եկին յարեւելից », կ'ըսէ. խորասանն Արեւելեայ ըստ է. (Տես Մ. Խորեն. Աշխարհագր, հմ, լգ. էջ 42). այսպէս գէպ 'ի Հայ-Արիաստան ուղղելով իրենց ընթացքն, եւ կամ սոսկալի ընդհարման մի գիպելով՝ Հայ աշխարհէ գաղթօղ Արեւաց նահանջն է մերս Նախահօր պատմութիւնն, և այսպէս դառնալով գէպ 'ի հիւսիս՝ Տոսպ գաւառին մէջ՝ գուցէ իւր ծննդավայրն, օժանդակութիւն կը գտնէ և զինքն հալածօղ պետին (Բելայ) բանակին գէմ՝ դառնալով՝ կը յաղթահարէ և կ'ըստ պաննէ, Այս գէպք ուրիշ մեկնութիւն մ'ալ կրնայ ունենալ, զոր ապա կը պարզեմք, եւ այսու Բնիկ-Արիաստանն և Արի ժողովուրդն քաղաքներովն և եկած յարած գաղթականներովն կը մկրտէ Հայրենեաց գաղափարովն, իբր տուն հայրենի, հայրենիք, Հայրենաստան, որոյ գուցէ կրճատումն է Հայն և Աւարանն (°).

Անկասկած պատեւրազմ մը տեղի ունեցած է, և մեր Նախահայրն ենթադրական անձ չէ. մեծ ոք է այդ Հայկն. մեծ և արիւնահեղ կռիւ մ'է տեղի ունեցածն, բայց թէ Հայկ կոչումն ուղիղ է թէ աղաւաղ, չեմք գիտեր. Այսպիսի յայտնի է՝ զի մեր Նախահայրն Արի և Վնճ Վնարդ մ'է, հիանալի արարած և անյաղթ հսկայ մ'է. և զի Արիաստան աշխարհ իւր նոր կոչումն ստանալով՝ Նախահօր գալուստն ողջունած ժամանակ, Քրիստոսէ 4000 տարիներ առաջ, ըստ պատմութեան, մինչ Սոորեստանեայ պետութիւնն կը կազմուէր, Հայք առաջինն եղան՝ որ իրենց Նահապետն Աստուածոյ դասակից համարեցան, և հսկայ համաստեղութեան մը հետ չափելով « Հայկ » կ'անուանեն. զոր ապա Յոյնք՝ ըստ իրենց հսկային՝ Որիոն պիտի կոչեն, 'ի Հայոց գաղափարելով. — « Բացեալ իցես զպատրուակ Հայկին » . (Տես Յովբ, Գլ. ԼԸ). նորահնար բացատրութիւն մի չէր Ս. Սահակայ գրչին, Գրոց թարգմանութեան ժամանակ, և ոչ ալ գիւտ. այլ ժողովրդական հայրենաստուր աւանդն և ժառանգութիւնն էր:

Հնախօսութիւնն մատնանիշ կ'ընէ ամեն հնագոյն ազգաց մէջ Քաղդէացուց աստեղաբաշխութիւնն և աստեղագիտութիւն. քանի՜ նպաստաւոր նեցուկ մ'է մեր փաստերուն այս օրինակն, քանի՜ հաստատ ապացոյց թէ 'ի Հայոց խաղտեաց գաղութ են Քաղդէացիք, և թէ 'ի Հայոց տունէն տարած են աստեղաց գիտութիւնն. — Որչափ վստահաբար ուրեմն կրնամք ըսել՝ թէ ո՞ր քան հնախօսական գիտութիւնք բարձրանան, այնքան և մեր էութիւնն պիտի բարձրանայ և պանծայ:

Հայկայ և Բելայ պատմութեան նկատմամբ պարզագոյն գաղափար կը կարծեմ՝ յայտնել, ոչ թէ առաւել է բնորոշ փակել, այլ խաղտեաց (Քաղդէք) 'ի հիւսիսոյ Հայոց խաղտեաց աշխարհէն դէպ 'ի հարաւ գաղթած կամ յարձակած ժամանակ՝ ընդ առաջնորդութեամբ Բելայ (այսինքն է իրենց հսկային կամ պետին, վասն զի՝ Բել՝ Պետ, Տէր, ըսել է), կը հանդիպին 'ի Միջագետաց դէպ 'ի հիւսիս կրկին գաղթող կամ յարձակող և կամ 'ի Տոսպական գաւառս բնակող Արիականաց, որոց գլուխ է ծանուցեալն մեզ Հայկ։ Այդ ընդհարման պտուղն է խաղտեացւոց (Քաղդէք) դէպ 'ի Միջագետս մղիլն և անդ բնակութիւն հաստատելն։ Այս մասին կրկին կը խօսիմք Դիցարանութեան մէջ։

Ահա Քրիստոսէ 40 դար առաջ այդ տեղ հայրենեաց գաղափարի զարգացումն, զոյգ Ասորեստանեայց պետութեան սկզբան. իսկ անկէջ առաջ տեսանք և եզրակացուցինք Բնիկ Արիաստանի դիրքն և տուած ծագումներն, յորոց երկուքն յիշեցինք Տիւրքեսեանք և Քաղդէք, մին յարեմուտս և միւսն 'ի հարաւ. իսկ նախապատմական ժամանակաց մէջ կ'ենթադրեմք իրանեան—Արիքն, Հնդիկ—Արիքն, և այլն։

Ի՞նչ էր նախնի դարուց ժողովրդոց բարքն և կեանք. ի՞նչ էր Բնիկ—Արիաստանի (Հայոց) կազմակերպութիւնն, թող խօսիք F. Lenormant (Manuel d'Hist, anc. t. II. p. 341) և լսիմք. « Le morcellement fut, pendant un très grand nombre de siècles, la condition normale de tous les Iraniens », (իմիւ Aryens, վասն զի արիական տիպն անհնար է որոշել և զատել). « chez qui le système de la tribu, si bien en rapport avec la vie belliqueuse, pastorale, et agricole,... existait dans toute sa pureté, et formait la base de l'organisation sociale. Les familles se groupaient en tribus, celles-ci en communautés, les communautés en districts plus étendus, gouvernés tantôt par un chef unique... tantôt par une assemblée populaire... Telle fut l'existence et l'organisation républicaine des Mèdes, etc.... » —

Այս միութեան և հայրենեաց առաջին էացուցիչն, կամ այս գաղափարին ծնողն և հայրն՝ իւր սահմանաց մէջ և իւր որդւոց կողմանէ և հպատակելոց՝ զեղուն զգացմամբ կը պատուէր մինչ կենդանին էր, իսկ մահուամբն հայրասէր որդւոց ձեռք և ճարտարաց ձեռնառութեամբ Դիւցազարմի և Աստուածոց դասակցի պաշտօն և դիրք և անուն կ'ընդունէր։ — Խորենացի (Պատմ. Հայ. Ա. 11) կը հաստատէ զայս Կադմոսի խօսքովն առ Նախա-հայրն. « Ո՛վ մեծդ Դիւցազանց ». մեզմէ 59 դարեր յառաջ։

Գաղթականութիւնը դադարած չեն, երթեկը անպակաս են. Հայ ժողովուրդն հարաւէն Ասորաքաղղէացւոց հետ յարաբերութեան մէջ է. յարեկից իրանեանց՝ Մարաց ե Պարթեւաց հետ. յարեմոյից փոքր Հայոց ե փոքուն Ասիոյ հետ. հիւսիսէն՝ կաւկասեան լեռնաբնակաց հետ. այնպէս որ չորս կողմունքէն Գաղութը կ'երթան ու կու գան, կը յարձակին ե յարձակումն կը կրեն. ե նոյն իսկ յետ մեզ ծանօթ պատմական ժամանակաց:

Մարաց ե Պարթեւաց Հայոց հետ ունեցած յարաբերութիւնն անուրանալի է: Նիս. զՔրիստոս 2500—1300 Քաղղէացւոց դէպ 'ի հիւսիս 'ի Միջագետս դիմած ժամանակ՝ խորենացին կը յիշատակէ « Սիսակեան Սիւնեաց » կուր գետն անցնելով « Մեծ Դաշտին » տիրապետելն, որ կոչեցաւ « Դաշտ Աղուանից » . (Խորեն. Պտմ. Հայ. Բ. 8): « Ալբանիա այսինքն Աղուանք . . . ցկուր զամենայն սահմանս հանեալ է 'ի Հայոց » . (Տե՛ս Խորեն, Աշխրհգ. Հ. Արսէն Սուբրի վնեատիկ, էջ 28): — Երոդոտոս (Գիրք է, գլ. 64) « Սկիւթացիք՝ կ'ըսէ, Պարսիկներէ Սակք կ'անուանին » . որք ըստ Ստրաբոնի (ԺԱ. 511) Հայոց աշխարհն կը յարձակին ե իրենց բնակած վայրն Սագաւին (Սակաշէն, Շակաշէն) կը կոչեն: Դիտել կու տամք. ի՞նչ տարբերութիւն կայ Սիսակ ե Սակ ե Սկիւթ անուանց մէջ. Սկիւթաց՝ կաւկասիոյ, ե Սիսակեան, Սիւնեաց՝ Աղուանից, այս կրկին գրաւեալ երկիրներու մէջ:

Ագաթանդեղոս, փ. Բուզանդ, Եղիշէ, Առողիկ, ե այլն կը յիշեն Գաղութներ 'ի Հայոց 'ի Պարսս, 'ի Յոյնս, յԱսորեստան, ի Դամասկոս, 'ի Բուլղարս Ասիոյ (կաւկասոյ), ե այլն:

Այս ճանապարհը նոր չէին Հայոց—Արեաց համար, հարիւրաւոր դարեր յառաջ որ ինչ Բնիկ—Արի ժողովրդեան հարթածն էր, նոյն ճամբով ե նոցա սերունդք կը գալթէին, պանդրխտէին, ե երբեմն իսպառ իսկ փոխուած կը դառնային իրենց բնիկ տուն, իրենց հետ բերելով ամենազգի լաւութիւնք, ե խզճալի փոփոխմունք մերթ ես:

Իսկ 'ի հարաւոյ՝ արտաքին ազգերէն որ գաղթեցին 'ի Հայս՝ կը յիշուին փիւնիկք, (Խորեն. Պտմ. Հայ. Ա. 19). Գնթունիք: — յԱսորեստանեաց Ագրամելէք—Սանասարեան Գաղութ, (Ս. Գիրք. Դ. Թգւր. ԺԹ. 37. — Եսայի լէ 38): — Սասունք, Արծրունիք ե Գնունիք, (Խորեն. Պտմ. Հայ. Ա. 23): — 'ի Հրէից՝ Բագրատունիք. (Անդ. Բ. 14, 16, 19, 49, ե այլն). (Բուզանդ. Դ. 55): — Մարաց ե Արիական Հնդկաց գաղութն ե կրկին դարձն. առաջինք Մասեաց ուղքն կը բնակին ե իրենց անուամբ կոչին վայրքն՝ Մարք. (Խորեն. Պտմ. Հայ. Ա. 30. — Ղևոնդ Պտմ. Գլ. Բ), երկրորդքն՝ « Դեմետր ե Գիսանէ իշխանք Հնդկաց ե

եղբարք », (Զեհնոր էջ 35), իրենց հատուածողն կու գան առ վաղարշակ . « և նա ետ նոցա զերկիրն « Տարոնոյ... շինեցին քաղաք և կոչեցին վիշապ » : Այս մասին կը խօսիմք ապա Դիւցարանութեան մէջ :

Այս անհատնում՝ ալեաց անվերջ ելևէջն երբ դադար առած է արգեօք 'ի Հայս :

Շարայարեղի

ՇԻԳԱԿՈՅԻ ՄԵԾ ՑՈՒՑԱՎԱՆԴԵՍՆ

Շիրակոյի Աւարհանդէսն՝ որ պիտի միացնէ հիմ աշխարհը մորիմ հետ՝ բոլոր իր մտաւորական յառաջնադասութեամբք, ամտարակոյս մեծապէս շահագրգիռ է ամէմ փոքր 'ի շատէ զարգացած ամօի համար : Ուստի այն մեծ և օգտաշատ համդիսին մերկայ չեղողներում փափաքը լեցնելու համար պիտի հրատարակենք ականաւատեա եղող մեր Շիրակոյի թղթակցին Մեծ . Մամաւեամի շարք մի յօդուածները, որ ամբողջ իր ճարտար գլխով և մուրք ճաշակին համեմատ, պիտի մերկայացնէ ըմթեցողաց առջև ամոր իսկատիպ և գեղարուեստական համապատկերը, յորում կը յուսամք թէ ազգային ևս իւր մեղ՝ բայց մշամակալից տեղին կ'ունենայ : Մեր խրախուսմաց հետ՝ շմորհակալիքն ևս յայտնելով յիշեալ թղթակցին, կը յամօմնք որ գիտից և գիտութեանց կարգաբանութեան համեմատ գրելիք դասաւորելով, — կամ ինչպէս ինքը կ'ուզէ, — ամոր եզակամութիւնն ևս մասմատր կերպով դուրս ցաթկեցնէ, համառօտելով միամզամայն բացման և փակման առթիւ . մեծամեծ ամծամք ճառախօսութեանց իմաստն՝ այն համրային ցուցահամդիսի մասին :

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ուսանողաց ծանօթ ըլլալու է սոյն մեծ հանգիսին նշանակութիւնն, վասն զի սա պիտի յիշատակէ աշխարհի ամենամեծ անձնաւորութեանց միոյն մեծ գիւտն եւ գըտողին անգերազանցելի հանճարն : Երբ ի լոյս ենք, զիսաւար երեւակայել եւ գոռարին է եւ տհաճելի լուսաւորութեան եւ գիտութեան այս պայծառ ժամանակի մէջ գոռարին է երեւակայել թէ մարդիկ ինչպէս ագէտ, ու կոյր էին եւ չգիտէին խորհիլ թէ աշխարհս գնդաձեւ է եւ թէ արեւեկեան ցամաք եր-